


ԱՅՍ ԹԻՒՈՎ



Մոնթրեալի Հայ Դատի յանձնախումբը կոչ կ'ուղղէ գորակցելու Յարութ Թիթիլեանի ընտրապայքարին. էջ 4

Թորոնթոյի հայ կեդրոնը կը թողարկէ իր նոր կայքէջը՝ www.acctoronto.ca, էջ 4

ԼՈՒՐԵՐ ԸԱՄԱԶԳԱՅԻՆԷՆ, էջ 5

Սուրիահայութեան Վերականգնումի ԽՆԳԻՐԸ, էջ 6

Թուրքիա Իր Պատմական Արխիւները Եւ Փաստաթուղթերը Ինչպէ՛ս Ոչնչացուցած Է, էջ 7

CAMAM

3401, Olivar-Asselin
Montréal (Qc) H4J 1L5

397, Boul. des Prairies
Laval (Qc) H7N 2W6

45 Hallcrown Place
Willowdale ON M2J 4Y4

Մոնթրեալի Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի փոխ-տնօրէնուհի նշանակուեցաւ Լոռի Ապրաքեան



Կարդալ էջ 4

Հայ Դատը Կը Հովանաւորէ Միջին Արեւելքի Քրիստոնէական Պաշտպանութեան Նուիրում Ժողովը

Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբը այս տարի եւս հովանաւորներէն մէկը պիտի հանդիսանայ մայրաքաղաք Ուաշինկթընի մէջ կայանալիք «Ի պաշտպանութիւն քրիստոնէականներու» համաժողովին, որուն պիտի մասնակցին մեծ թիւով քաղաքական եւ հոգեւոր առաջնորդներ, ներառեալ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոս: Հոկտեմբեր 24էն 26 կայանալիք ժողովի մասնակցներուն ուղադրութեան առանցքը պիտի ըլլան Միջին Արեւելքի մէջ քրիստոնէական պաշտպանութեան եւ քրիստոնէութեան ու կրօնական ազատութեան պահպանման հետ կապուած հարցեր: Նշենք, որ անցեալ տարուան համաժողովին մասնակցած էին աւելի քան 50 ամերիկացի Գոնրեաակաւորներ:

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի եւ ՀՕՄ-ի պատուիրակութիւնը մասնակցեցաւ Հայաստանի անկախութեան նուիրում ՀՀ դեսպանատան հանդիսութեան



Հոկտեմբեր 10-ին Գանատայի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան մէջ կայացաւ պաշտօնական ընդունելութիւն՝ նուիրում ՀՀ Անկախութեան 26-ամեակին եւ Հայաստանի ու Գանատայի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման 25-ամեակին:

Ընդունելութեան մասնակից էին Բարգէն Արք. Չարեան, Արգար Եպս. Յովակիմեան, 15 երկիրներու դեսպաններ, Գանատայի արտաքին գործոց նախարարութեան բարձրաստիճան ներկայացուցիչներ եւ Հայ համայնքի ներկայացուցիչներ: ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի եւ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութեան ներկայացուցիչները, ինչպէս նաեւ ՀՅԴ Բիւրոյի անդամ Յակոբ Տէր խաչատուրեան նոյնպէս ներկայ էր ընդունելութեան:

Իր խօսքին մէջ դեսպան Լեւոն Մարտիրոսեան անդրադարձ կատարեց անկախութեան 26 տարիներու ընթացքին Հայաստանի Հանրապետութեան ձեռքբերումներուն եւ այդ ճանապարհին յղթահարուած խոչընդոտներուն: Դեսպանը յատուկ կարեւորեց անցնող 26 տարիներու ընթացքին Սփիւռքի եւ յատկապէս գանատայի համայնքի դերը Հայաստանի զարգացման գործընթացին մէջ:



Ամերիկայի Թեմերու (Արեւելեան, Արեւմտեան, Գանատա) հոգեւորականաց դասերու միջ-թեմական միացեալ 8-րդ համագումարը կայացաւ Մոնթրեալի մէջ: Կարդալ էջ 5: (Լուսանկարը՝ Արմէն Ալեմեանի)

2017
CR-V
STARTING FROM
\$26,890*

Image for illustration purposes only.

HONDA
GABRIEL

7000, boulevard Henri-Bourassa E.
Montréal-Nord, QC H1G 6C4
514 327-7777
www.hondagabriel.com
◀ OPEN SATURDAYS ▶

Kevork Asadourian
Vahan Vartanian
Haig Khobasarian

*Conditions apply. Taxes not included. Freight and air taxes not included. Limited time offer applicable on selected models only and subject to change or cancellation without notice. For more information, visit Honda Gabriel.



**ARZ**
fine foods
the essence of mediterranean gourmet
Authentic Food Experience

ARZ Fine Foods

**You Can Find ARZ Products
At Selected, Loblaws,
Superstore, Fortinos,
Wholesale Club, & Nofrills
Stores**

- Visit arzfinefoods.com for the latest promotions.
- You can also find us on Flipp
- For employment opportunities; Email your resume to humanresources@arzfinefoods.com



The Armenian Community Centre of Toronto Presents The

OUTSTANDING CANADIAN *Gala*

Honouring the Late

Sara Corning

Sunday, November 26, 2017

Armenian Community Centre - 45 Hallcrown Place, Toronto, ON, M2J 4Y4

Dinner - 6:00pm

Keynote Speaker: The Honourable Jean Augustine
The First Black Woman elected to the Parliament of Canada and Cabinet Minister

Ticket Price: \$125.00 | For tickets please email anct@anctontoronto.org

Ascenseur **Adams** Elevator

Services Inc.

PO Box 30, St-Laurent, Qc. H4L 4V4

RBQ# 1812-6474-22

www.adamselevator.ca

TEL: 514-745-4455 - FAX: 514-745-6613

**RENOVATION, REPAIRS, MAINTENANCE,
INSTALLATION OF ELEVATORS.**

Eddie, Pedro, Joyce Oughourlian

«ԲԱՍՏՐՄԱՃԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-Ի ԿՐԹԱԹՈՇԱԿ

PASDERMAJIAN FOUNDATION SCHOLARSHIP FONDATION PASDERMAJIAN BOURSE D'ÉTUDES

«Բաստրմաճեան Հիմնադրամ»-ի 2017-2018 ուսումնական տարեշրջանի համալսարանական կրթաթոշակի դիմումագրերը պիտի ընդունուին մինչեւ՝ 1 Նոյեմբեր 2017

Թեկնածուն պարտի ըլլալ՝

- Համալսարանական ուսանող՝ Պսակաւոր, Մագիստրոս կամ Դոկտորական աստիճանի:
- Յաջող իր ուսումնական արդիւնքներուն մէջ եւ գործունեայ տեղական եւ ի մասնաւորի հայկական կազմակերպութիւններէ եւ միութիւններէ ներս:
- Շրջանաւարտ՝ Մեծն Մոնթրէալի մէջ գործող հայկական երկրորդական վարժարանէ մը: Եթէ վարժարանը այդ ուսումնական տարեշրջանի ընթացքին երկրորդական 5րդ կարգ չունի, ուրեմն տուեալ վարժարանի բարձրագոյն կարգի աշակերտները՝ շրջանաւարտ կը նկատուին:



Բարեհաճեցէ՛ք 2017-2018 տարեշրջանի դիմումագրերը պատուիրել կապուելով հետեւեալ է-նամակի հասցէին՝ pasdermajian.scholarship@gmail.com

Նկատի պիտի առնուին միայն լրիւ ամբողջացած եւ է-նամակով ուղարկուած դիմումագրերը, պահանջուած փաստաթուղթերով :

Մոնթրեալի Հայ Դատի յանձնախումբը կոչ կ'ուղղէ զօրակցելու Յարութի Ծիթիլեանի ընտրապայքարին

Մոնթրեալի Հայ գաղութը հիմնուած է 1960ական թուականներուն: Տարիներ առաջ կազմուած այս փոքրաթիւ գաղութը այսօր Մոնթրեալի մէջ աճած ու դարձած է առողջ եւ աշխոյժ:

Մեր գաղութի իւրաքանչիւր անդամի անսակարկ գոհողութեան եւ տարիներու անխոնջ աշխատանքին իրեն արդիւնք, այսօր՝ Հայ Կեդրոնի համալիրը կը համախմբէ եկեղեցին, կրթական հաստատութիւնները եւ բոլոր քոյր միութիւններն ու կազմակերպութիւնները իր յարկին տակ: Հոս կ'արժէ ընդգծել գաղութի կազմութեան ու զարգացման գծով կարեւոր գործոն մը եւս, որն է քաղաքական մեր բարեկամ դէմքերու բարոյական եւ նիւթական նեցուկը, հանդէպ Հայ Դատին կամ Հայ կեդրոնին ու մեր կրթական հաստատութիւններուն՝ ըլլա՛յ քաղաքապետական, նահանգային կամ դաշնակցային մակարդակներու վրայ:

Տարիներ շարունակ բոլոր քաղաքական բարեկամներուն հետ մեր յարաբերութիւնները պահպանուած են բարձր մակարդակի վրայ, վայելելով փոխադարձ յարգանք: Քաղաքապետ՝ Denis Coderre եւ իր խումբը միշտ թիկունք կանգնած են մեր Դատին ու ներկայ եղած են մեր գաղութի կարեւոր ձեռնարկներուն, ի մասնաւորի Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակի ձեռնարկներուն. այսօր հերթը մե՛րն է, մեր աշխատող ձեռքը երկարելու եւ մե՛ր աջակցութիւնը ջուլաբերելու այս ընտրապայքարին:

Այս տարի, Նոյեմբեր ամսուն պիտի կայանան քաղաքապետական ընտրութիւնները եւ պր. Յարութի Ծիթիլեան, մեր գաղութի մօտիկ բարեկամը, թեկնածու է իրեն Ahuntsic-Cartierville շրջանի քաղաքապետ: Ան խնդրած է գաղութի աջակցութիւնը եւ խոստում ստացած՝ անսակարկ օժանդակութիւն իր ընտրապայքարին համար:

Առ այդ, յառաջիկայ 5 շաբաթներուն ընթացքին կարիքը ունինք կամաւորներու՝ հեռաձայնային աշխատանքի կամ դռնէ-դուռ թուղթիկներ բաժնելու:

Կոչ կ'ուղղենք Մոնթրեալի մեր հայրենակիցներուն մասնակցելու վերոնշեալ աշխատանքներուն:

Կը վստահինք ձեր աջակցութեան այս առաքելութիւնը յաջողութեամբ իր աւարտին հասցնելու:

Մոնթրեալի Հայ Դատի յանձնախումբ

Մոնթրեալի Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի փոխ-տնօրէնուհի Գլաուկոյեցաւ Լորի Ապրաքեան

Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի Վարչական Խորհուրդը եւ Սուրբ Յակոբ եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը հանրութեան կը տեղեկացնեն թէ 30 տարիներէ ի վեր Սուրբ Յակոբ Ազգային վարժարանի մէջ որպէս հայերէնի դասատու եւ Օգոստոս 2008-էն ի վեր որպէս փոխ-տնօրէնուհի պաշտօնավարող Տիկ. Յուլիէ Շամիկեան-Աֆարեան հանգստեան կոչուեցաւ դպրոցական այս տարեշրջանի սկիզբը: Վարչական Խորհուրդը եւ Հոգաբարձութիւնը Տիկին Աֆարեանին կը մաղթեն առողջութիւն եւ յաջողութիւն ապագայի բոլոր իր ծրագիրներուն:

18 Սեպտեմբեր 2017-ին Օրդ. Լուի Ապրաքեանը նշանակուեցաւ դպրոցի փոխ-տնօրէնուհի՝ պատասխանատու նախակրթարանի: Օրդ. Ապրաքեան Դպրոցի մէջ պաշտօնավարած է 2010 Օգոստոսէն ի վեր որպէս դաստիարակ նախակրթարանի 5-րդ կարգին եւ Օգոստոս 2016 էն ի վեր որպէս առժամայ փոխ-տնօրէնուհի: Օրդ. Ապրաքեան աւարտած է Մ.թ.Կր. համալսարանի sciences de l'éducation ծրագիրը: Ներկայիս, Մոնթրեալի համալսարանին մէջ՝ հետեւելով administration de l'éducation ճիւղին, ան կը շարունակէ իր մագիստրոսական վկայականի ուսումը, որ պիտի աւարտէ Ապրիլ 2018-ին: Յաջողութիւն կը մաղթենք Օրդ. Ապրաքեանին՝ իր նոր պատասխանատուութեան մէջ:


Թորոնթոյի Հայ Կեդրոնը կը թողարկէ իր նոր կայքէջը՝ www.acctoronto.ca


Արդիականութեան եւ արհեստագիտական նորարարութեան ընձեռած հնարաւորութիւնները քարոզչական լաւ միջոցներ են: Հպարտութեամբ եւ գոհունակութեամբ կը յայտնենք, որ Թորոնթոյի Հայ Կեդրոնը օժտուած է նոր կայքէջով՝ www.acctoronto.ca:

Կաքէջը երկլեզու է: Կ'ընդգրկէ ծաւալուն տեղեկութիւններ Թորոնթոյի գաղութի կազմութեան, Հայ Կեդրոնի պատմութեան եւ աշխատանքներուն մասին:

Մեր այցելուներուն համար շատ դիւրին եւ հետաքրքրական ձեւով տեղադրուած են բոլոր տուեալները: Կայքէջի այցելուները պիտի տեսնեն 6 ենթաբաժանումներ՝ Մեր Մասին, Օրացոյց, Միութիւններ, Կազմակերպութիւններ, Լուրեր եւ Կապ:

Մեր Մասին բաժինով, այցելողը պիտի ծանօթանայ Թորոնթոյի գաղութին եւ Հայ Կեդրոնին: Օրացոյց բաժինին մէջ, այցելողը պիտի գտնէ կեդրոնէն ներս տեղի ունեացող բոլոր ձեռնարկներու մանրամասնութիւնները: Միութիւններ եւ Կազմակերպութիւնները մանրամասնօրէն կը ներկայացնեն Հայ Կեդրոնի յարկին տակ գործող միութիւններուն, վարժարանին, եկեղեցւոյ եւ մամուլի հաստատութիւններուն մասին ծանօթացում, աշխատելադրուած, ենթադրուած կամ ծանօթութեամբ, վարչական կազմեր եւ ընկերային ցանցերու եւ կրթութեան հասցէներ: Լուրերը կը տեղեկացնեն հայրենի եւ տեղական քաղաքական, ընկերային եւ մշակութային վերջին իրադարձութիւնները եւ վերջապէս Կապով կրնաք կապ հաստատել կեդրոնի տարբեր բաժանումներուն հետ եւ արձանագրուել ամսական լրատուին:


 Այցելեցե՛ք Ս. Յակոբ Առաջ. Մայր Եկեղեցւոյ Կիրակոսեայ դպրոցի կայքէջը՝ www.sourphagop.org

 **Ձեր բոլոր ճամբորդական Կարիքներուն համար հեռաձայնել՝ (514) 284-7676**

ՅԱՏՈՒԿ ԳԻՆԵՐ ԴԵՊԻ ՀԱՅԱՍՏԱՆ... ԼՍԻՍԳՈՅՆ ՍՊՍՍԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

PERMIS DE QUÉBEC

3438 Rue St-Denis, Montreal, QC H2X 3L3, Fax: 514-284-7677

 Այցելեցե՛ք Թորոնթոյի ամենօրեայ վարժարանի բարեկարգուած կայքէջը՝ / Visit our new website www.arsarmenianschool.ca

 **Ghadir Meat & Restaurant**

T. 416-750-7404
T. 416-750-7400
1848 Lawrence Avenue E.
Scarborough, ON M1R 2Y4
E-mail: info@ghadirmeatmarket.com

 **ANI BAKERY AND FINE FOODS**

OPEN 7 DAYS A WEEK!
WEEKDAYS 9am - 7pm
SATURDAY 6AM - 6PM
SUNDAY 8AM - 3PM

LOCATION: 2094 LAWRENCE AVENUE EAST
ON THE NORTH-EAST CORNER OF LAWRENCE AND WARDEN

 **Noor Fine Food**
Gourmet Mediterranean Cuisine

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5

Tel 416 745 3111
Fax 416 745 9337

 **ANI Restaurant**

905.761.6484

1450 Clark Ave. West,
Thornhill ON L4J 7R5

 **Sutton**

Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage
1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0

Annie Varbedian
Sales Representative

Direct: (416) 918-3615
Office: (416) 739-7200
Fax: (416) 739-9367
annievarbed@hotm.com
www.suttongroupadmiral.com

 **hearing aid source**

Andre Ayvazyan HIS B.A.S

andre@HearingAidSource.ca
416 754 4327 (HEAR)

Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9

 **Crown Pastries**
Fine Middle Eastern Pastries

2086 Lawrence Ave East (Lawrence & Warden)
Toronto ON, M1R 2Z5

Tel 647.351.2015
www.crownpastriesbaklava.com

 **I.D.A.**
Part of the *Royal* family of pharmacies.

Pharmacists
Sarkis Balian
Vartan Balian
Maral Abdalian Balian

Cassandra Pharmacy Inc.
2040 Victoria Park Ave.
Toronto, Ontario
M1R 1V2

Tel. : 416.449.2040
Fax: 416.449.2048

 **ANI BAKERY**
ԱՆԻ ՓՈԱՊԱՆ

Middle Eastern Pizza Lahmajoun

ARSEN DABBAGHIAN

25 Howden Road, Unit #2
Scarborough, Ontario M1R 3C8

Tel: 416.285.7164

Շողիկ Թորոսեանի յաջող համերգը Գանատայի մէջ



Աշնանային գեղեցիկ այս օրերուն մոնթրէալահայալուծները հաճելի երեկոյ մը ապրեցաւ լիբանանահայ յայտնի սոփրանօ Շողիկ Թորոսեանի համերգը ունկերելով: Տաղանդաւոր սոփրանօն յատուկ հրաւէր ստացած էր Լաւալի Ս. Գէորգ Հայ Առաքելական եկեղեցւոյ կողմէ՝ համերգ մը տալու Ս. Գէորգի տօնին առթիւ, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 30 Սեպտեմբեր 2017-ի երեկոյեան ժամը 8:00-ին, Լաւալի Bon Pasteur եկեղեցւոյ մէջ:

Համերգը կը հովանաւորէր Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բարդէն Արք. Չարեան: Ներկայ էին հոգեւոր հայրեր, վերապատուելի, համերգին նախագահ տիկ. Հերմինէ Վարդանեան, պատուոյ հրաւիրուած տիկին Աւետիս եւ Մարալ Թաշճեան, մշակութային, մարզական միութիւններու եւ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ 500-ի հասնող արուեստասէր ունկերներ:

Բացման խօսքը կատարեց տիար Մեսրոպ Պերեճիքեան, յայտնելով թէ Ս. Գէորգի տօնին առթիւ եկեղեցւոյս հովիւն ու հոգաբարձութեան կազմակերպած շաբթուան յայտագիրը իր լրումին պիտի հասնէր երիտասարդ սոփրանօ Շողիկ Թորոսեանին համերգով:

Օրուան բեմավարը անդադարձաւ յայտնի մենակատարին կենսագրականին, ըսելով թէ Շողիկ Թորոսեան Համազգայինի Բ. Կանաչեան երաժշտանոցի ճայնամարդութեան դասընթացները գերազանց արդիւնքով աւարտած է եւ վկայուած Երեւանի Կոմիտասի անուան Պետական երաժշտանոցին: Ան դիւանաւոր մենակատարն է Կլիւիկոյ Կաթողիկոսութեան «Շնորհալի» եւ Համազգայինի «Գուսան» երգչախումբերուն: Պարոն Պերեճիքեան աւելցուց. «Իր Աստուածատուր տաղանդն ու գայն բարելաւելու անխնայ աշխատանքը տարիներու ընթացքին, իր դիմաց բացին ասպարէզային լայն հորիզոններ՝ հայ թէ օտար բեմեւ վրայ»:

Ան ամփոփ կէտերով ներկայացուց նաեւ Շողիկ Թորոսեանին դաշնակով ընկերացող գաղութիս յայտնի ու սիրուած դաշնակահար, երաժիշտ Սառա Գալաբեանը, թէ՛ ստացած է դաշնակահարի Դոկտորականի վկայականը Երեւանի Կոմիտասի անուան Պետական երաժշտանոցին իբրեւ վկայեալ դասախօս, նուագակցող, սենեկային նուագախումբի եւ համերգի մենակատար: Ղազարեան ունի 20 տարուան մանկավարժական փորձառութիւն:

Բեմավարը յաջողութեան բարեմաղթութիւններէ հոք բեմ հրաւիրեց զոյգը:

Յայտագիրը կ'ընդգրկէր դասական եւ հոգեւոր երգեր, ինչպէս՝ Ա. Պարթեւեանի «Ամէն, Հայր Սուրբ»ը, Ռ. Աթայեանի « Հաւուն, Հաւուն»ը, Է. Յակոբեանի « Նոր Ծաղիկ»ը, G. Caccini-ի «Ave Maria»ն, Կոմիտասի «Անտունի»ն, «Քերկեր Յոլեր»ը եւ վերջապէս Ա. Տիգրանեանի յայտնի օֆերա «Անուշ»էն «Անուշի երգ»ն ու «Անուշի խելագար»ը:

րութեան պատկեր»ը:

Պէտք է ըսել, որ ժողովուրդը կախարդուած էր ի տես տաղանդաւոր մեներգչուհիին, որովհետեւ ան կրցած էր բոլորը փոխադրել գէպի հայրենի լեռները, գէպի Լոռուայ գիւղ՝ ապրելու եւ տառապիւրու Անուշին հետ: G. Caccini-ի «Ave Maria»ն ալ զգայացուց էր, շնորհիւ Շողիկին գիւթիչ ու անկրկնելի ճայնային խաղերուն: Բեմ հրաւիրուեցաւ Թեմիս Առաջնորդ Գերշ. Տ. Բարդէն Արք. Չարեանը: Ան գնահատագրեց յանձնեց Ս.Գէորգ եկեղեցւոյ Golf-ի եւ Festival-ի յանձնախումբերու անդամներուն, որոնք ծրարան ձեւով կ'աշխատին ծառայելու գաղութիս եւ եկեղեցւոյ:

Յայտագրին երկրորդ մասը սկսաւ Mozart-ի «Alleluja»ով, որ կենսունակութեամբ լի էր եւ ոգեւորող: Անոր յաջորդեց Գ. Երկանեանի «Հայաստան»ը եւ Կանաչեանի «Օրօր»ը:

Շողիկ Թորոսեան, Հ. Պէրպլեանի «Անոր» երգով հմայեց ունկերները՝ շնորհիւ իր անզուգական մեկնաբանութեան, երգի բառերուն տալով ամբողջական իմաստը: Գ. Մանասեանի «Վարդ մը գետինը» երգը հրամցուց նաեւ գեղեցիկ ոճով մը:

De Curtis-ի «Come Back to Sorrento»նով եւ Ա. Այվազեանի «Երեւան»ով Շողիկին ճայնային կարողութիւնները հասան իրենց կատարելութեան, ելեւէջները ընթացան հեզասահ ու մաքրամաքուր հնչեցողութեամբ, եւ որպէս ապացոյց այս բոլորին՝ ամբողջ սրահը թնդաց յոտնկայս ծափողջոյններով:

Մեներգչուհին ու դաշնակահարը անգամ մը եւս կրկնեցին «Երեւան» երգը, եւ ժողովուրդը կրկին ըմբոշւեց այդ անկրկնելի պահը:

Համերգին աւարտին Առաջնորդ սրբազան հայրը բեմ հրաւիրուելով խօսքը ուղղեց տաղանդաւոր մենակատարին ու դաշնակահարին եւ ըսաւ. «Անոնք հայ երաժշտութեան ելեւէջներուն ընդմէջէն եւ ստեղնաշարին վրայ մատներու զգայուն հպումով կրցան ներշնչել բոլոր ներկաները. անոնք պատգամ մը տուին հայ երգին ու երաժշտութեան մասին, թէ հայ երգը խօսք է, ապրում է, զգացում ու պայքարի դրսեւորում»:

Ան շնորհակալութիւն յայտնեց եւ բարձրօրէն գնահատեց այս երեկոյ կազմակերպողները, որովհետեւ ընթացիկ շաբաթը հոգեւոր սնունդի, պատգամ փոխանցելու եւ աղօթքի շաբաթ էր, որ իր լրումին հասաւ որակաւոր եւ գնահատանքի արժանի այս համերգով:

Սրբազան Հայրը իր խօսքին մէջ նաեւ ըսաւ. «Օտար երգին կողքին պէտք է արդար ձեւով գիտնալ արժեւորել նաեւ հայ երգն ու երաժշտութիւնը, որ մարդուս կեանքը կը նորոգէ»:

Առաջնորդ Սրբազան Հօր «Պահպանիչ» աղօթքէն հոք, բոլոր ներկաները Շողիկ Թորոսեանին ընկերակցելով միաբերան երգեցին «Կլիւկիա» երգը:

Շողիկ Ազարիկեան Ադամեան

ԼՈՒՐԵՐ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԷՆ

Սեպտեմբեր ամիսը, բաւական աշխոյժ ամիս մըն էր Համազգային Մոնթրէալի «Անահիւն» մասնաճիւղին համար: «Պետրոս Աղաձեան» թատերախումբի «Ապակեայ Կենդանիներ»-ը յաջող ներկայացումէն հոք, բեմագրութեամբ ընկեր Վիգէն Թիւֆէնքճեանի, Համազգայինը՝ հաւատարիմ իր առաքելութեան, ներկայ էր գաղութիս գանազան ձեռնարկներուն, ծանօթացնելու հայկական մշակոյթը օտար թէ հայ շրջանակներէն ներս: Այսպէս՝



- Շաբաթ Սեպտեմբեր 23-ին, Համազգային Մոնթրէալի «Անի» պարախումբը, գեղարուեստական ղեկավար Էլվա Հայրապետեանի, մաս կազմեց TMR Multicultural Fair-ին, որը այս տարի նուիրուած էր Հայկական եւ Լիբանանեան մշակոյթներուն: Այս առթիւ պարախումբը ներկայացուց կէս ժամուայ յայտագիր մը, մեծ խանդավառութիւն ստեղծելով ներկաներուն մօտ:



- Նոյն գիշեր, Շաբաթ Սեպտեմբեր 23-ին, Համազգային Մոնթրէալի «Անի» Ազգագրական պարախումբը, գեղարուեստական ղեկավար Ժօ Աւագեանի, էլոյթ ունեցաւ Թէքէեան Մշակութային Կեդրոնի շրջափակէն ներս, ՀՀ անկախութեան 26րդ տարեդարձին առթիւ: Անոնք հանդէս եկան երեք պարերով, ստեղծելով խանդավառ մթնոլորտ մը վայել օրուան առիթին:



- Ուրբաթ, 29 Սեպտեմբերին, Հայ Կեդրոնի Ա. Ահարոնեան սրահէն ներս, տեղի ունեցաւ karaoke night-ը, կազմակերպութեամբ Համազգայինի NetLinks յանձնախումբին: Երիտասարդ բազմութիւն մը ներկայ էր, միասնաբար վայելելու բացառիկ ջերմ մթնոլորտ մը, ուր ամէն անձ առիթը ունեցաւ թէկուզ մէկ գիշերուան համար, իրականացնելու իր երգիչ դառնալու երազը: Յիշեցնենք թէ տոյն ձեռնարկին հասոյթը ամբողջութեամբ կը տրամադրենք Երեւանի մէջ կայանալիք Համազգայինի Ուսանողական հաւաքին, Մոնթրէալի մասնակիցներուն ծախսերուն:

Ամերիկայի Թեմերու (Արեւելեան, Արեւմտեան, Գանատայ) հոգեւորականաց դասերու միջ-թեմական միացեալ 8-րդ համագումարը կայացաւ Մոնթրէալի մէջ

2-5 Հոկտեմբեր 2017-ին, Ս. Թարգմանչաց տօնի նախօրեակին, Հիւսիսային Ամերիկայի Թեմերու (Արեւելեան, Արեւմտեան ու Գանատայ) հոգեւորականաց դասերու միջ-թեմական միացեալ 8-րդ համագումարը տեղի ունեցաւ Մոնթրէալի մէջ, հիւրընկալութեամբ Գանատայի Հայոց Թեմին: Համագումարը կը վայելէր նախագահութիւնը երեք թեմերու Առաջնորդներուն՝ Գերաշնորհ Տ. Օշական Արք. Չօլոյեանի (Արեւելեան Թեմ), Գերաշնորհ Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի (Արեւմտեան Թեմ) եւ Գերաշնորհ Տ. Բարդէն Արք. Չարեանի (Գանատայի Թեմ): Այս տարուան համագումարը նուիրուած էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետի հռչակած «Վերանորոգումի Տարի»ին: Համագումարը առիթ մը եղաւ, որ երեք թեմերու Հոգեւոր Հայրերը խորհրդածութիւններու, դասախօսութիւններու եւ քննարկումներու ընդմէջէն, վերանորոգման թեման գանազան տեսանկիւններէ գիտեն, մարտահրաւէրները Ս. Հոգւոյ զօրութեամբ դիմագրաւեն ու իրենց ուսերուն վրայ դրուած Քրիստոսի քաղցր լուծը սիրով եւ հաւատարմութեամբ կրեն: Թող Աստուած հաստատ պահէ Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցին, Մեծի Տանն Կլիւկիոյ Աթոռը իր Թեմերով, ժողովականութեամբ եւ ողջ ժողովուրդով:

Դիւան Միջ-թեմական Միացեալ 8-րդ Համագումարի

Սուրիահայության Վերականգնումի Խնդիրը

Հայաստան-Սփիւոֆ Համահայկական 6-րդ Համաժողովին «Հայապահպանումի Հիմնադրուիքներ» Ուղղութեան Վերջին խառնակ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդին Խօսքը:

1.- Այս վերնագիրին տակ պիտի փորձեմ համաժողովին մասնակցող ազգակիցներուս ներկայացնել վերլուծականներով ու պատերազմական գործողութիւններով յատկանշուած տարածաշրջանի մը մէջ գտնուող սուրիահայ սուրիահայ համայնքի արտակարգ իրավիճակէն դուրս գալու եւ վերականգնելու դժուարին խնդիրին մեր այսօրուան պատկերացումը:

2.- Աշխարհին եւ մարդուն գոյատեւումին ու երկարակեցութեան մէջ, ըստ երեւոյթի, գոյութիւն ունին ներքին օրինաւարութիւններ կամ տրամաբանութիւններ, որոնք բնութեան տարրերն ու բանաւոր էակները կը մղեն խանգարուած, քանդուած կամ կործանուած վիճակներէն դուրս գալ՝ վերականգնելու կամ վերանորոգելու: Նորոգուելու պահանջը բնութեան մէջ բնական, իսկ մարդուն մէջ գիտակցական իրականութիւն մըն է: Այս իմաստով յարութեան եւ անմահութեան գաղափարներն ու հաւատքը վերականգնումին հասնելու մարդկային մտածողութեան բարձրագոյն գիտակցութիւններն են:

3.- Վերականգնումը՝ վերանորոգումը, վերակառուցումը, վերաշինումը, սովորաբար բան մը իր նախնական ու սկզբնական վիճակին կամ ձեւին մէջ կանգնեցնելու կամ վերադարձնելու է: Աստուածաշունչ մատենանը կ'արձանագրէ. «Հին աւերակները պիտի շինեն, առաջնան կործանուածները պիտի կանգնեցնեն, աւերուած քաղաքներն ու շատ դարերէ ի վեր աւերակ մնացածները պիտի նորոգեն» (Ես 4): Նորոգութեան հոգին մեզի կը արուի Արարիչէն. «Հոգիդ կը զրկես... եւ աշխարհը կը վերանորոգես» (Սղ 104:30) կամ՝ «Տիրոջ ապաւինողներուն ուժը պիտի նորոգուի» (Ես 40:31):

4.- Արդարեւ, Սուրիոյ տագնապին առնչութեամբ թեր եւ դժմ կարծիքներ գոյութիւն ունին, սակայն ուղղափառ քաղաքական գործընթացը իր ծրագիրը իրագործելու վրայ է: Մեզի համար մէկ իրականութիւն յատկապէս սուրիահայութիւնը յայտնուեցաւ սուրիական պատերազմական փոթորիկին մէջ եւ կրեց մարդկային բազմաթիւ կորուստներ ու բազմատեսակ աւերածութիւններ: Աստիճանաբար նուազեցաւ համայնքին թիւը: Ունեցաւ երկրէն ներս աւելի ապահով նկատուած վայրեր տեղափոխուածներ, յետոյ՝ Լիբանան եւ Հայաստանի Հանրապետութիւն ժամանակաւոր թէ մնայուն հանգամանքով մեկնածներ, մինչեւ իսկ՝ եւրոպական, ամերիկեան եւ աւստրալիական ցամաքամասեր մեկնածներ:

5.- Ընդունելով մարդկային ամենակարեւոր իրաւունքներէն ազատութեան սկզբունքը, կարելի չէ ոեւէ անձի կամ ընտանիքի հաւասարապէս պարտադրել մնալ կամ մեկնել: Մարդիկ իրենք կը կատարեն եւ կատարեցին ընտրութիւնը, սակայն համայնքային հաւաքական ղեկավարութիւնը պարտաւոր էր եւ է անոնց կեցութիւնը ապահովել ամէն իմաստով, իսկ մեկնողին՝ ճանապարհ ցոյց տալ դէպի հայրենիք: Ատկէ անդին՝ անհատական նախասիրութեան ու պատասխանատուութեան կը վերաբերի:

6.- Սուրիոյ տագնապին մէջ սուրիահայութեան միասնակամութիւնն ու միասնական ճիգերը դրսևորուեցան «Սուրիահայութեան շտապ օգնութեան եւ վե-

րականգնումի մարմինին» մէջ: Սուրիահայերը, աշխարհացրիւ ազգակիցներու անվերապահ գորակցութեան շնորհիւ, կարելիութիւնը ունեցան տագնապին մէջ անգամ պահել համայնքն ու համայնքային կառոյցները, վեց տարիներ շարունակ:

7.- Երբ սուրիահայութեան մայրաքաղաքը՝ Հալէպը, ընդամէնը տասը ամիսներ առաջ վերագտաւ իր խաղաղութիւնը, ինչպէս որ յաջողաբար վերագտագրուած էին Սուրիոյ հայահոծ կարգ մը շրջանները, սուրիահայերը շտապային դրութենէն դուրս գալու ընթացքին մէջ մտան եւ այդ պատճառով, եթէ ՄՇՕՎ մարմինը նախապէս կը մտածէր հետագային կատարելիք վերականգնումի մասին, այսօր արդէն իր անուանումէն սկսեալ՝ «Սուրիահայութեան վերականգնումի մարմին», մինչեւ վերականգնումի առաջնահերթութեանց յատկացումն ու թղթածրարներու պատրաստութիւնը, մեծաւ մասամբ մշակած կամ մշակման ընթացքին մէջ է:

8.- Սուրիահայութեան վերականգնումի կոչն ու ամենալուրջ նախաձեռնութիւնը կատարուեցաւ 2017-ի առաջին օրերուն, երբ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. վեհափառ հայրապետը հովուապետական պատմական այցելութիւն տուաւ Սուրիա, Հալէպէն կատարեց «Դէպի վերականգնում» կոչն ու վերականգնումի յատկապատկերացումը: «Վերականգնում ըսելով՝ սոսկ քանդուածը վերականգնել կամ վնասուածը վերաշինել պէտք չէ հասկնալ... վերակազմակերպել մեր համայնքային կառոյցները եւ վերանորոգել մեր հաւաքական կեանքը»:

9.- Սուրիահայեր, թէեւ փոքր թիւերով, սկսան վերադառնալ մասնաւորաբար Հալէպ եւ իրենց բնակարաններն ու գործատեղիները վերաբանալու աշխատանքներ կը տանին: Այս միջոցին ՄՇՕՎ մարմինը վերականգնումի յատուկ նախագիծ սկսաւ մշակել, ուր ներառուած են համայնքային, կրթական, միութենական կառոյցներու սերտողութիւնները: Աշխատանքային առաջին համագումարը կայացաւ Անթիլիասի մէջ (չաբաթ, 29 ապրիլ 2017-ին) եւ մասնագիտական ուսումնասիրութիւններ մէկ կողմէ, թէեւ դանդաղ, սակայն յատուկ պատկերացումով կը յուսանք եւ կը հաւատանք, որ անփորձանք յառաջ պիտի երթան: Թող մեր լաւատեսութիւնը ամբողջով իրատեսութեամբ:

10.- ՄՇՕՎ մարմինին վերականգնումի ծրագրերն են մէջ նկատի առնուած առաջնահերթութիւններն են. ա) Սուրիահայութեան կամ վերադարձող ազգակիցներուն բնակարանները եւ գործատեղիները նորոգել ու գործածութեան մէջ դնել,

բ) Փոքր եւ միջին տնտեսութիւն նախաձեռնող ծրագրերն են օժանդակութիւններ տրամադրել,

գ) Կրթական հաստատութեանց՝ հայկական դպրոցներու վերաշինութիւնը եւ վերանորոգութիւնը կատարել,

դ) Եկեղեցիներն ու համայնքային կեդրոնները նորոգել եւ քան վերաբանալ,

ե) Յոյժ կարիքաւորներուն շարունակել նիւթական տարբեր օժանդակութիւններ տրամադրել,

զ) Կրթական օժանդակութիւններ ապահովել՝ ուսուցիչներուն եւ աշակերտութեան, բաց պահելու համար հայ դպրոցը եւ շարունակելու հայակերտումի ու հայեցի դաստիարակութեան նուիրական առաքելութիւնը:



11.- Վերականգնումի իրագործման անհրաժեշտ նախապայմաններն ու նախատեսաւորներն են.

ա) Ռազմական գործողութեանց դադարումը եւ քաղաքական համաձայնութիւնները՝ նպատակ ունենալով ամբողջական խաղաղութեան վերահաստատումը ամբողջ երկրի տարածքին. ասոնք կ'երաշխաւորեն վերականգնումը Սուրիոյ եւ անոր մէջ՝ սուրիաբնակ սուրիահայութեան,

բ) Համայնքի վերականգնումի սերտողութեան ամբողջական ծրագրի հրապարակումը կատարել՝ հայկական թէ օտար շրջանակներուն ծանօթացնելու միտումով,

գ) Վերաշինութեան իրականացման համար դրամահաւաքի կազմակերպում՝ ըստ ծրագրերներու, եւ նիւթական օժանդակութեանց տրամադրում, ինչպէս՝ շտապ կացութեան ընթացքին համահայկական աշակերտութիւններ տեղի ունեցան, նոյնպէս ալ այսօր վերանորոգման նպատակով ներդրումներ կատարել համայնքի վերաշինութեան համար,

դ) Վերջապէս, սուրիահայութիւնը պիտի շարունակէ իր պատմական առաքելութիւնը՝ հայրենական աւանդութիւններու պահպանում, արեւմտահայ լեզուին եւ մշակութիւն կենսագործում, Հայոց ցեղասպանութեան պահանջատիրութեան եզակի վկայութիւն եւ միջինարեւելեան երկիրներուն ու ժողովուրդներուն մէջ համակեցութեան յաջողագոյն օրինակ ըլլալը:

12.- Սուրիահայութեան վերականգնումը ինքնանպատակ չէ: Հայ ազգի ամբողջականութեան մէկ մասին գորացումը հզորացումն իսկ է համայն հայութեան եւ հայրենիքին: Այդ իմաստով օգնել սուրիահայ քոյրերուն եւ եղբայրներուն՝ կը նշանակէ օգնել հայութեան եւ Հայաստանին:

Եկէ՛ք՝ համահայկական բազմատեսակ դժուարութեանց եւ տագնապներուն մէջ յիշենք սուրիաբնակ սուրիահայ համայնքը եւ շարունակենք եղբայրական ու քրոջական ձեռք երկարել անոնց:

ԾԱՀԱՆ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ Առաջնորդ Հայոց Բերիոյ Թեմին

Հ.Յ.Դ. ՍԱՐԳԻՍ ԶԷՅՌԵԱՆ ԿՈՄԻՏԵՆՈՒԹԵԱՆ 25-ԱՄԵԱԿ 1992-2017 19 ՆՈՅՄԲԵՐ, 2017



Noor Fine Food™

Gourmet Mediterranean Cuisine

Ձեր ճաշատեսակներու՝ Հայկական եւ Միջին Արեւելեան պահանջներուն համար դիմեցէք «Նոր Ֆայն ֆուտ» հաստատութեան, որ միշտ պատրաստ է, ձեր սպասարանները (Քէյթերինգ) ճիշտ ժամանակին հասցնել ձեր հասցէներուն:

Թորոնթոյի հասցէն,-

1 High Meadow Place, Unit 9
Toronto, Ontario M9L 2Z5

Tel 416 745 3111

Fax 416 745 9337

by Samadi Traqi Group

www.instagram.com/noorfinefood




«Նոր Ֆայն ֆուտ» հաստատութիւնը մասնագիտացած է նաեւ տեսակաւոր խորովածներու (քէպապ) պատրաստութեան մինչեւ իսկ բնան գառնուկ եփուած եւ անոր յարակից ուտելիքներով: Ճշդեր որ գառնուկները ծնած եւ մեծցած են Օնթարիո մէջ:

Հաստատութիւնը պատրաստ է նաեւ մկրտութիւններու, կշանտքներու, հարսնիքներու եւ այլ խրախճանքներու ու հաւարոյթներու ձեր նախասիրած ուտելիքներ մատակարարելու:



«Նոր Ֆայն ֆուտ» հաստատութիւնը մտա օրէն «BABYLON» ճաշարանը պիտի բանայ Հայաստանի մէջ:





CONNU POUR LE MEILLEUR SOUVLAKI ET GYRO EN VILLE !
 KNOWN FOR THE BEST SOUVLAKI & GYRO IN TOWN!



Special of the day with coffee and dessert

Monday to Friday \$9.95 11am - 4pm

Saturday and Sunday \$10.95 11am - 4pm

4491, boul. Samson, Chomedey, Laval

Tel: 450 681-3333

Dim. à mer. : 11h à 11h Sun. - Wed. 11am - 11pm
 Jeudi à sam. : 11h à minuit Thurs. - Sat. 11am - midnight

Résidence pour
aînés autonomes
et semi-autonomes

Residence
Senior
Certifiée

À partir de **995\$** (par semaine)
 Tous les repas, collations et supervision
 médicale inclus
1½ à 4½

Gicleurs automatiques
dans chaque appartement

Մեկ հոս ուրախ եկ
 Գրև. հեկեաև

Պատրաստ եմք և՛ ունենալ
 ձեր շահագուստան տոհմն ներս:

Il n'y a pas d'âge pour être heureux!

12300 boul. Laurentien, Montréal H4K 2Z6
514.335.1881 • www.manoirgouin.com

LAVALLOIS EN MOUVEMENT!

LAVAL ON THE MOVE

For a green and blue city

- Restore**
swimmers' access
to our rivers
- Extend**
organic waste collection
to 100,000 new addresses
- Increase**
our tree cover and enhance
our woodlands
- Accelerate**
the deployment of
electric transit

"On November 5, let's keep the movement going!"

Mayor of Laval **Marc Demers**

MOUVEMENT
LAVALLOIS

ÉQUIPE MARC DEMERS

mouvementlavallois.org



Մոնթրեալի Հայ Դատի յանձնախումբը կոչ կ'ուղղէ Մոնթրեալի հայութեան, որ Նոյեմբեր 5-ի քաղաքապետական ընտրութիւններուն քուէարկեն հետեւեալ թեկնածուներուն, որոնք կը վայելեն Հայ Դատի յանձնախումբին զօրակցութիւնը:

Comité National Arménien de Montréal appelle les Montréalaises et Montréalais à voter le 5 novembre 2017 en faveur des candidats suivants.



Denis Coderre
Candidat - Maire de Montréal



Harout Chitilian
Candidat - maire d'arrondissement
Arr. Ahuntsic-Cartierville



Effie Giannou
conseillère de ville
Arr. Ahuntsic-Cartierville
District Bordeaux-Cartierville



Hadrien Parizeau
Candidat - conseiller de ville
Arr. Ahuntsic-Cartierville
District Saint-Sulpice



Raphaël Melançon
Candidat - conseiller de ville
Arr. Ahuntsic-Cartierville
District Ahuntsic



Lorraine Pagé
Candidate - conseillère de ville
Arr. Ahuntsic-Cartierville
District Saulx-au-Récollet



Alan DeSousa
Candidat, maire d'arrondissement
Arr. Saint-Laurent



Aref Salem
Candidat, conseiller de ville
Arr. Saint-Laurent
District Norman-McLaren



Francesco Miele
Candidat - conseiller de ville
Arr. Saint-Laurent
District Côte-de-Liesse



Michèle D. Biron
Candidate - conseillère d'arrondissement
Arr. Saint-Laurent
District Norman-McLaren



Jacques Cohen
Candidat, conseiller d'arrondissement
Arr. Saint-Laurent
District Côte-de-Liesse



Mary Deros
Candidate - conseillère de ville
Arr. Villeray-Saint-Michel-Parc-Extension
District Parc-Extension



Anie Samson
Candidate - maire d'arrondissement
Arr. Villeray-Saint-Michel-Parc-Extension



Dimitrios Jim Beis
Candidat - maire d'arrondissement
Arr. Pierrefonds-Roxboro



Luc Ferrandez
Candidat - Maire de l'Arrondissement
de Plateau-Mont-Royal



Craig Sauvé
Candidat - Conseiller de Ville,
Saint-Henri-Est-Petite-Bourgogne-
Pointe-Saint-Charles-Griffintown

BAL MASQUÉ

Danse Annuelle Homenetmen Gamk
ՀԱՐՄ Կանգի պարահանդես



Samedi: 28 Octobre, 2017
Portes Ouvertes à 19h30
Le Château Royale
3500 Boulevard du Souvenir, Laval
Sato Tashjian et orchestre
Admission général 60\$
Admissions pour les enfants
de moins de 12 ans 40\$
Pour les réservations de table
veuillez appeler:
Hosmik Bimadlian: 514-831-4755
Melissa Thomassian: 514-831-7138

Տոսո Խոշիտի

WEDJ
Chris24

Ըարբաթ, 28 Հոկտեմբեր 2017-ին
Երեկոյան ժամը 7:30-ին
Տոմսերու սակ 60\$
12 տարիկանէ վեր 40\$
Տոմսերը ապահովելու համար
Գիմել Բնումիկ Պիղեմեանիին
514-831-4755
եւ
Մելիսա Թոմասեանիին
514-831-7138



2017-ի Մանրբեւոյի < Սակ > Մամանկոյի



ՏԻՆԱՎԱՃԱՐ

ՕՐՈՒՍԱՆ ԿՆՔԱՄԱՅՐ՝ ԸՆԿԻ, ԵՐԱՆ ԳԱՆՔԵՆ



11 եւ 12 Նոյեմբեր 2017
ժամը 10-էն 5

Մոնթրէալի Հայ Կեդրոն
3401 Rue Olivier-Asselin
Montréal (Qc) H4J 1L5

LIQUIDATION
VENTE DE GARAGE

ՎԻՏԱԿԱՆ ՀԱՆՈՒԹԻՒՆ



2 billets d'avion Air Canada en classe économique*
*À condition d'être en France au départ de Montréal en août
*Hors Québec. En savoir plus sur www.ars.ca
*Validé 2016

ՀԱՅԿԱՍՏԱՆ ՍԱՆԳՍՏԱՆ ՌԵՏԵՆԵՐԵՆ ԵՒ ԱՆՈՒԹԵՐԵՆ // ԿԱՐԱՆՈՒ ՁԱՊՈՐ

ՀԱՅԿԱՍՏԱՆ ԶԵՆՍՐՈՒԹԵՄԻ ԳՈՐԾԵՐ, ՀԱԳՈՒՍԵՐԵՆ, ԳՈՀԱՐԵՐԵՆ

GLOBAL ONLINE AUCTION TO BENEFIT
ARMENIAN RELIEF SOCIETY INC.
ENDOWMENT FUND

VISION 2020

NOVEMBER 1ST- 12TH 2017
BIDDING FOR GOOD

TO VIEW AND BID ON AUCTION ITEMS VISIT:
[HTTPS://BIDDINGFORGOOD.COM/ARSEASTUS](https://biddingforgood.com/arseastus)
CONTACT THE ARS AUCTION COMMITTEE AT: ARSGLOBALAUCTION@GMAIL.COM



AUCTION ITEMS INCLUDE:

WEEK-END GETAWAYS | UNIQUE GIFTS | RESTAURANT GIFT CARDS | SPA AND SALON SERVICES
| JEWELRY | ELECTRONICS | ARTWORK | SPORTS MEMORABILIA | SPORT EVENTS | MUCH MORE!



Les encadrements
olympic

SINCE 1988 OLYMPIC PICTURE FRAMES HAS MADE OR IMPORTED HUNDRED OF THOUSANDS OF FRAMES FOR PRINTINGS, WATERCOLORS, LITHOGRAPHS AND MIRRORS.

OUR CUSTOMERS INCLUDE FRAMING STORES, ART GALLERIES, MUSEUMS, ARTISTS AS WELL AS PRIVATE CLIENTS.

IN STORE WE HAVE MORE THAN 3000 SAMPLES, AS WELL AS 600 READY FRAMES FOR YOU TO CHOOSE. FROM BACKED BY OUR EXPERTISE AND SOLID EXPERIENCE WE WILL ADVISE YOU IN MAKING THE RIGHT CHOICE.

OUR WHOLESALE PRICES ARE MORE THAN COMPETITIVE. BEFORE BUYING COME AND SEE US, YOU WILL BE REALLY PLEASED.

Մեծաքանակ Շրջանակների Արտադրութիւն



6831, DE L'ÉPÉE,
(ACCÈS PAR BEAUMONT)
MONTRÉAL (QUÉ.) H3N 2C7
TEL./FAX. (514) 495-1930
encadrementolympic.com

COUPON
VALID UNTIL
DECEMBER 2017
15% OFF

SPECIAL OFFER! CLASSIFIED SECTION

DON'T MISS THIS OPPORTUNITY TO ADVERTISE!

NEW AT HORIZON WEEKLY!

A CLASSIFIED ADS SECTION

SPECIAL RATES! / A DISCOUNT OF 60%

Please call (514) 332-3757 to reserve your space now!



HAIG AFARIAN

Cell : 514.862-6779
Bur : 514.360.3000 ext 1234
haig.afarian@gmail.com

effectuée par
MALES ARCHITECTES-HYPOTHÉCAIRES

Charisma FINANCE

3310 100e Avenue, bureau 350, Laval
Québec H7T 0J7 • FAX: 514.313.5718



Groupes Sutton - Performer Inc.
123 Place Frontenac
Pointe-Claire, QC H9R 4Z7

Sutton

ALBERT ARKILIANIAN
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

aarkilianian@sutton.com
Cell: 514.962.8822
Bur: 514.426.9595
Fax: 514.426.9596

Satisfaction garantie ou je revends
votre propriété gratuitement!*

*certaines conditions s'appliquent

NISSAN | **VÉHICULES D'OCCASION CERTIFIÉS** | **HONDA**

GABRIEL | **GABRIEL**

Kevork Asadourian
Directeur des ventes - usagé
Sales Manager - Pre-Owned

kasadourian@gabriel.ca

7000, Henri-Bourassa E., Anjou (QC), H1G 6C4
Tél : 514 327-7777, Cell: 514 318-4115, Téléc. : 514 327-7967
www.nissangabriel.com • www.hondagabriel.com

École De Conduite

AZIG Driving School

Tel: 514-336-1110

Moniteur-Instructeur Instruction Automatique ou manuelle
AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM
1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II



Personal & Corporate Tax Returns
Financial Statements
Bookkeeping
Business Plan

NATALIE SKAFF, CPA, CGA
Comptable Professionnelle Agréée | Chartered Professional Accountant

nat.skaff@gmail.com
Tel. (514) 963 3363
2866 Rue De Chamonix
Saint-Laurent, Québec
H4R 3B7

Services available
in Armenian, Arabic,
English and French

BRING YOUR OWN WINE

NAZARETH
CLASSIC GRILL

550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6
Tel: 450.937.4064
Email: resto.nazareth@hotmail.com

SAMUEL TOPALIAN
450 682-1644

AUTO SAMSON



MÉCANIQUE GÉNÉRALE - REMORQUAGE
SERVICE DE PNEUS MISE AU POINT

4700 BOUL. SAMSON, CHOMEDEY LAVAL, QC.



RE/MAX

ՀԱՅԿ ԿԱՐՏՈՒՆԻԱՆ
Hayk Hartounian
Courtier immobilier résidentiel
Residential Real Estate Broker

C 514.574.6162
B 514.333.3000

NETTOYEUR
MARIE-CLAIRE

CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE
À DOMICILE ET AU BUREAU (MONTRÉAL ET LAVAL)

2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

Linda Kharaboyan Notaire
Notary

Ձեր նոտարական և իրաւաբանական հարցերն ու նրազիրենը վստահեցե՛ք մեզի

Vos affaires. À cœur.

Therrien Couture

3111, boul. Saint-Martin O., #500
Laval (Québec) H7T 0K2
t. 450 682.5514 - 855 633.6326
linda.kharaboyan@therriencouture.com
therriencouture.com

VIZUALIS
optométriste

DR SHANT DONABEDIAN

Centre d'Achat Fairview - Fairview Mall
Pointe Claire
514 695 2555 - VIZUALIS.CA

PHOTO Cristal

(514) 744 4313

Berj Merdjanian

Mariage - Portrait - Graduation
Restauration - Commercial - Passeport
Publicité - Lamination - Encadrement

Video - Reproduction

647 Boul. Decarie
VSL Montreal QC
H4L 3L3

photocristal@hotmail.com
www.photocristal.com

Assura Bien inc.
Cabinet en assurance de dommages et de services financiers

Ապահովագրական գրասենյակ

KRIKOR ABRKIAN **VAHAN MATOSSIAN**

970 Montée de Liesse, suite 306, Saint-Laurent, Qc. H4T 1W7
T: 514.903.3999

RITA BAGHDASSARIAN
Conseillère en Sécurité Financière
Revenu Garantie Viager

COMPTE D'ÉPARGNE LIBRE D'IMPÔT (CELL) • CRÉATION D'HÉRITAGE •
REER FERR RENTE RETRAITE • PLAN D'ÉDUCATION-REÉÉ •
ASSURANCE-VIE & HYPOTHÉCAIRE • ASSURANCE SALAIRE
& COLLECTIVE • ASSURANCE DE PARTENARIAT

3820, boul. Lévesque Ouest, Bureau 101,
Laval Qc. H7V 1E8
Tél.: (450) 973-2822 • (514) 884-1117 • Fax: (450) 973-2262
ritabagh@yahoo.com

TAXI
MIRABEL
450-430-2650

Taxi Mirabel Հայկական հաստատութիւնը կարիքը ունի
20 հայ թարսի վարորդի Միտակը շրջանին մէջ:
Հաճեցե՛ք հեռաձայնել Արային (514) 979-1317 թիւին:

Taxi Mirabel needs Mirabel area taxi drivers with pocket number,
besoin de chauffeur de taxi. **Call/Appelez: (514) 979 1317**



RE/MAX
RE/MAX 3000 inc.
Agence immobilière

Elie Berberian
Courtier immobilier / Real Estate Broker

C 514.519.3543
B 514.333.3000



ONGLES CAROLE
HAMPARTSOUMIAN

POSE D'ONGLES
RÉSINE ET POUFRE
MANICURE & PÉDICURE AVEC GEL
RECOURVEMENT SUR ONGLES
NATURELS

Առողջ եղունգներու ինտանքի համար հեռաձայնել՝
514 941-0014 LAVAL

KRIKOR MAROUNIAN RLU
Independent Financial Security Broker

Life Insurance • Disability & Critical Illness Insurance
Group Insurance • Pension Plans
Travel/Visitor Medical Insurance

11820 General Giraud
Montreal, QC H4J 2H6

Res: (514) 332-7021
Fax: (514) 332-7376
Cell: (514) 927-2666


krikormar@gmail.com

FIVE STAR
ELECTRIQUE
CINQ ÉTOILES

SPECIALIST IN DECORATIVE GARDEN LIGHTING
RESIDENTIAL-COMMERCIAL

BEDROS NALPATIAN

442, LA RIVIÈRE, LAVAL, QC.
TEL: 514 - 497- 5155 FAX: 450 - 689- 3997
E-MAIL: ELECTRIC.FIVESTAR@GMAIL.COM



CENTUM™
Metroapp Wealth Solutions Inc.
Licence # 12147

Mortgage programs for new comers to Canada
New purchases
Refinancing
Second mortgages
Self employed
Low credit score
Access to top lenders including private lenders

SOSIE DERNERESSIAN
MORTGAGE AGENT
LICENCE #M12001830
716 Gordon Baker Road,
Unit 204A, Toronto
Ontario M2H 3B4

416.662.6650 cell
centum.ca/sosie_derneressian

ALINE BEKEREJIAN
NOTAIRE - NOTARY

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L 1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Նոտար եւ իրաւաբանական խորհրդատու՝ Ալին Բեքերեճեան

ՄՈՆՈՐԷԱԼ

Պատրաստուեցէ՛ք Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ Տարեկան Պարահանդէսին,
24 Դեկտեմբեր 2017-ին,
մասնակցութեամբ ԷԼԻ ՊԵՐՊԵՐԵՆՆԻ ԵՒ ԻՐ ՆՈՒԱԳԱԽՈՒՄՐԻՆ:
Մանրամասնութիւնները յաջորդիւ:

Ս. ՅԱԿՈՒՔ ԱՋԳԱՅԻՆ ՎԱՐՉԱՐԱՆԻ «Վ. ԵՒ Ա. ՍԱՐԱՅԵԱՆ» ՆԱԽԱԿԻՐԱՐԱՆԻ
ԵՒ «ԲԱՍՏՐՄԱՅԵԱՆ» ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆԻ **ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ**
Շաբաթ, 14 Ապրիլ 2018-ին

Համագգայինի «Սանահին» մասնաճիւղի կազմակերպութեամբ, Երեւանի 17 Հոկտեմբեր 2017-ի երեկոյեան ժամը 8:00-ին, Մոնթրէալի Հայ Կեդրոնի Աւետիս Ահարոնեան սրահէն ներս, բանաստեղծ Եւ Հայ Գրականութեան ուսուցիչ Յարութ Պէրպէրեան պիտի ներկայացնէ սփիւոբիայ գրող Վեհանոյշ Թեմանի ԱՂՕԹՔՆԵՐ ՈՒՌԿԱՆԻ ՄԷՋ գիրքը իսկ նարտարագէտ ու գրասէր Բաֆֆի Անէմեան պիտի ներկայացնէ հեղինակի ԽՕՍՈՂ ԼԵՐԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ հատորը: Մուտքը ազատ է. տեղի պիտի ունենայ հիւրասիրութիւն Եւ գրոյց հեղինակի հետ:

ԼԱԻԱԼ

Ուրբաթ, 27 Հոկտեմբեր 2017-ին
Լաւալի Հայ Օգնութեան Միութեան «Շուշի» մասնաճիւղ
«Halloween»
«Centre Armenie», 1025 Blvd Elisabeth Laval, Qc.

ՄՈՆՈՐԷԱԼ

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Աստուածաշունչի սերտ-դուրեան 2 խմբակները արդէն իսկ վերսկսած են իրենց երկշաբաթական հանդիպումները՝ հոգարարութեան ժողովարահէն ներս.

- «ՆՈՐԱՎԱՆՔ» խմբակ, 16-25 տարեկան երիտասարդ/երիտասարդուհիներու համար՝ Կիրակի առաւօտեան ժամը 9.45-10.45
- «ՆԱՐԵԿ» խմբակ, 26-40 տարեկան երիտասարդ/երիտասարդուհիներու համար՝ Կիրակի առաւօտեան ժամը 10.30-11.30:

Ճշգրիտ թուականները գիտնալու Եւ յաւելլելու մանրամասնութեանց համար հեռաձայնել եկեղեցւոյս դիւանատուն. 514 331 5445 կայան 202՝ Կարօ Սրկ. Նոյնտեանին:

ALINE BEKEREJIAN
NOTAIRE • NOTARY

ՆՈՏԱՐ Այլիս Պէրէրեան

Achat Hypothèque Refinancement Mandat Testament Succession Mariage Procuration	Առեւտուր Անշարժ Կալուածք Վերաֆինանսաւորում Պատուիր Կտակ Կալուածք Անուամուսիկ Փոխանորդագիր	Purchase Mortgage Refinance Mandate Will Estate Marriage Power of Attorney
---	--	---

180, rue Fleury ouest
Montréal, Qc, H3L1T5

T 514.382.7222
F 514.381.1818

aline.b@notarius.net
www.abnotaires.com

Շաառայութիւնները կը մատուցուին Արաբերէն, Հայերէն, Ֆրանսերէն, Եւ Անգլերէն լեզուներով:

«Հայ Հորիզոն» հեռատեսիլի յայտագիրը կը սփռուի հետեւեալ կայաններէն Եւ ժամերուն՝

Videotron: HD616 կամ SD16 Bell Fibe: HD1216 կամ SD216	Շաբաթ- 08:30 (առաջին սիւտում) Կիրակի- 07:30am Երկուշաբթի- 08:00am Երեքշաբթի- 08:30am Չորեքշաբթի- 7:30pm Հինգշաբթի- 10:30am, 8:30pm Ուրբաթ- 5:00pm Ուղիղ արձակում՝ www.icitelevision
--	---

ՀՕՄ-ի Սոնթրեալի ընկերային ծառայութեան գրասենեակը կ'աջակցի Գանատա ներգաղթած սուրիահայերուն

ՀՕՄ-ի Սոնթրեալի Ընկերային ծառայութեան գրասենեակի հիմնական առաքելութիւնը Մեծն Սոնթրեալի հայութեան ընկերային կարիքներուն հասնիլն է, շեշտը դնելով կարիքաւոր անհատներու Եւ ընտանիքներու վրայ: Իսկ վերջին շրջանին մեծ աշխատանք կը տարուի Գանատա նորահաստատ սուրիահայ ընտանիքներուն օգտակար հանդիսանալու համար: Մեր գործունեութիւնը կ'ընդգրկէ տեղեկատուութիւն, ներգաղթողներու աջակցութիւն, տարեցներու Եւ կարիքաւորներու օժանդակութիւն.

- Կ'օգնենք դիւրացնելու անոնց համարկումը (intégration) Եւ երկրի օրէնքներուն, սովորութիւններուն Եւ քաղաքացիական իրաւունքներուն ու պարտաւորութիւններուն ծանօթացումը:
- Կ'ամբողջացնենք կառավարական փաստաթուղթերը դաշնակցային Եւ նահանգային մակարդակներու վրայ: Allocation familiale, crédit d'impot pour les nouveaux arrivants:
- Նորեկները կ'արձանագրենք ֆրանսերէնի դասընթացներու:
- Կ'ընկերակցինք զանազան ժամադրութիւններու Եւ կը միջամտենք աշխատանք գտնելու կապակցութեամբ:
- Նոր ժամանած Եւ տակաւին նոր հաստատուող ընտանիքներուն կը տրամադրենք խոհանոցային իրեր:
- La Corbeille զանատական բարեսիրական կազմակերպութեան հետ յատուկ համաձայնութեամբ զեղչուած գիներով ուտեստեղէն կ'ապահովենք կարիքաւոր ընտանիքներուն:

Չորեքշաբթի օրերը ժամը 12:00էն - 4:00
Հասցէ՝ 3401 Olivar Asselin, Montreal, Qc H4J 1L5
Հեռաձայն՝ 514 514-335-2222

ADVERTISE YOUR BUSINESS HERE

ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԵՋ «ՀՈՐԻԶՈՆ»Ի ՁԵՐ ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԴԻՄԵՑԵՔ՝ ԺԱԳ ՎԱՐՊԵՏԵԱՆԻՆ

CALL JACK VARBEDIAN (416) 722-9225

SUDOKU - ՍՈՒՏՈՔՈՒ

Աստիճանաւորում՝ միջին

				7				
9								1 7
7		2		1 5				
	6		3			2		
							1 8 9	
	4		1			7		
8		5		4 2				
6							9 8	
					3			

horizon

HORIZON
Hebdomadaire arménien
Armenian Weekly
Publié par / Published by
Les Publications Arméniennes (1991)
3401, Olivar-Asselin
Montréal, Québec
Canada H4J 1L5

Abonnement annuel / Yearly subscription Canada
2^e classe - 2nd class: \$80 plus applicable taxes
1^{re} classe - 1st class: \$95

États-Unis / USA
1^{re} classe - 1st class: \$95 US

Ailleurs / Elsewhere
1^{re} classe - 1st class: \$125 US

Administration / Publicité
Sylva Eshradjian-Bachekjian
(General Manager)
Tél.: (514) 332-3757
Télécopieur/Fax (514) 332-4870
E-Mail: sylva@horizonweekly.ca
Courier de deuxième classe
/No. 40065294 / Second class mail
Dépôt légal: bibliothèques nationales du Québec et du Canada - ISSN 0708580X

Գրիգոր Հոբոյեան, (416) 494-1921
Ժազ Վարպետեան, (416) 722-9225

Վարիչ խմբագիր՝
Վահագն Գարագաշեան
Վարչական պատասխանատու՝
Սիլվա Պաշոգճեան
Քարտուղար՝ Մարինա Տէր Խաչատուրեան
Աագ խմբագիր՝
Վրէժ-Արմէն Արքիմեան
Անգլերէն/Ֆրանսերէն՝ Վիգէն Արքա-համեան, Թինա Սիլվահեան
Չեռատրում՝ Նէնսի Կիրակոսեան
Սրբագրիչ՝ Սոնիա Աճէմեան
Սոնա Թիթիզեան-Կէտիկեան

Լուսանկարիչներ՝ Արմէն Ալեմեան, Մայր Թաշճեան, Իշխան Ղազարեան, Գարուստ Պապեան, Վազգէն Տէկիմեմբաշ,

Financé par le gouvernement du Canada

Funded by the Government of Canada



Innovate
pour exalter

GROUPE NISSAN
GABRIEL

LIQUIDATION TOP CHRONO DE NISSAN

ROGUE SL À TRACTION INTÉGRALE

OBTENEZ

5 000\$⁺

DE RABAIS AU FINANCEMENT
À UN TAUX STANDARD



AVEC SYSTÈME DE
FREINAGE D'URGENCE
AVEC DÉTECTION
DE PIÉTONS¹



Rogue SL illustré*

SENTRA

LOCATION COURTE DURÉE



Sentra SR
Turbo illustrée*

Location à partir
de **214 \$** par mois,
avec 1 295 \$ en
comptant initial.

C'EST COMME PAYER
49\$^{}** PENDANT
/SEM. **24** MOIS
sur la Sentra SV à boîte automatique.

OU OBTENEZ

5 000\$⁺
DE RABAIS AU FINANCEMENT
À UN TAUX STANDARD

sur la Sentra SR Turbo avec Ensemble Privilège.
UNE ALLOCATION DE **20 000 KM/AN**,
AVEC KILOMÉTRAGE ADDITIONNEL À **0,10 \$/KM**



**+ PNEUS D'HIVER
SANS FRAIS[†]**
(valeur maximale de
840 \$)

NISSAN
GABRIEL
JEAN-TALON

3500, rue Jean-Talon O., Montréal, QC H3R 2E8
514 509-7777 | nissangabrieljeantal.com

⟨ OUVERT LES SAMEDIS ⟩

NISSAN
GABRIEL
ANJOU

7010, boul. Henri-Bourassa E., Anjou, QC H1E 7K7
514 324-7777 | nissangabrielanjou.com

⟨ OUVERT LES SAMEDIS ⟩

Offres en vigueur du 3 au 31 octobre 2017. Les offres de location sont basées sur une allocation de 20 000 km / an (allocation totale de 40 000 km pour un terme de 24 mois) avec kilométrage additionnel à 0,10 \$ / km. Le premier paiement est requis à la signature du contrat. Les frais d'inscription auprès du RDPRM et les frais d'agent pour l'inscription (jusqu'à 77 \$ au total) ne sont pas compris et sont payables à la signature du contrat. Taxes, immatriculation, droits spécifiques sur les pneus neufs (15 \$) et assurances en sus, et exigés à la signature du contrat. * L'offre à la location des modèles illustrés 2017 suivants : Sentra SR Turbo à boîte CVT / Micra SR à boîte automatique pour un terme de 24 mois équivaut à 24 mensualités de 360 \$ / 327 \$ (avec 0 \$ en comptant initial) lorsqu'ils sont loués par l'entremise de NCF. ** Les paiements ne peuvent être faits hebdomadairement. Ils sont uniquement mentionnés à titre informatif. † L'offre des pneus d'hiver s'applique aux clients admissibles à l'achat au comptant, au financement ou à la location des modèles Sentra / Micra 2017, immatriculés et livrés entre le 3 et le 31 octobre 2017, et est valable pour les modèles de pneus sélectionnés. Les pneus illustrés le sont à titre indicatif seulement. L'installation, les jantes et la mise au point des pneus ne sont pas incluses dans cette offre. Cette offre n'a pas de valeur d'échange au comptant. La valeur maximale des pneus d'hiver couverte par le concessionnaire est de 840\$ / 580 \$, taxes en sus, pour les modèles Sentra / Micra 2017. Les concessionnaires peuvent fixer leurs propres prix. Si le client choisit des pneus d'hiver d'une valeur plus élevée, il devra payer la différence. * Prix de vente à partir de 22 063 \$ / 31 563 \$ pour les modèles 2017 : Qashqai S à traction avant / Qashqai SL Platine illustré. Taxes, les droits spécifiques sur les pneus neufs, immatriculation et assurances en sus. + Le rabais de 5 000 \$ est applicable au financement à l'achat à un taux standard, uniquement par l'entremise de NCF, d'un modèle 2017 Sentra SR Turbo avec Ensemble Privilège / Rogue SL. Ce rabais ne peut être combiné à un taux de location ou de financement subventionné ni à aucune autre offre et il sera déduit du prix de vente négocié avant les taxes. 1. Le système de freinage d'urgence automatique avec détection de piétons ne saurait remplacer en aucun cas la conduite préventive et sécuritaire par le conducteur. Dans certaines conditions, il est possible que le système n'émette pas d'avertissement ou n'applique pas les freins. La vitesse et d'autres facteurs s'appliquent. Les offres sont sous réserve de l'approbation de crédit par Nissan Canada Finance ; elles peuvent être modifiées, prolongées ou annulées sans préavis. Modèles illustrés à titre indicatif. Visitez www.choisisseznissan.ca ou votre concessionnaire Nissan Gabriel Jean-Talon ou Nissan Gabriel Anjou pour tous les détails. Des conditions s'appliquent. © Nissan Canada inc., 2017.



BARRY KAREN GARO
KAZANDJIAN

12325, Av. Wilfrid-Lazare
 RÉCEMMENT VENDU

3585 Elie-Audair
 À VENDRE 589 000 \$

7171, de Chateaubriand
 À VENDRE 3 950 000 \$

514
333-3000
 DEMANDEZ UNE ÉVALUATION GRATUITE

9033 Gouin
 À VENDRE 1 899 000 \$

1045 Jarry
 À VENDRE 399 900 \$

3900, rue Beaumont
 RÉCEMMENT VENDU

11805, St-Elvaste
 À VENDRE 378 000 \$

8300, Gouin O.
 RÉCEMMENT VENDU

3205 Jean-Bouliet
 À VENDRE 599 000 \$

12005, Rue Jasmin
 À VENDRE \$749 000 \$

7503-7505, Av. Champagneur
 RÉCEMMENT VENDU

131 Ch. Bates Mont-Royal
 à partir de 288 2055 +TPS/TVA

12254, rue Valmont
 À VENDRE 279 000 \$

12239 Joseph-Sauzier
 À VENDRE 998 000 \$

12280, Olivier
 RÉCEMMENT VENDU

2180 Av. Alfred-Laliberté
 À VENDRE 499 000 \$

83 des Rouseaux
 À VENDRE 1 198 000 \$

12285 Av. Martin
 À VENDRE 1 350 000 \$

1533, Boul. Alexis-Nihon
 À VENDRE 579 000 \$

1642, Mullins
 RÉCEMMENT VENDU

2233-2238, Arthur-Vaies
 RÉCEMMENT VENDU

56 des Bocages
 À VENDRE 575 000 \$

7801-7805, Av. Stuart
 À VENDRE 449 000 \$

2743, Ernest-Hemingway
 À VENDRE 849 000 \$

12207-12211, boul. Taylor
 À VENDRE 798 000 \$

7801-7805 av. Stuart
 À VENDRE 549 000 \$

1188, Ch. Lucerne
 À VENDRE 799 000 \$

EXPERTISE

EXPÉRIENCE

EXCELLENCE

ÉQUIPE KAZANDJIAN .com

CLASSÉS PARMIS LES MEILLEURS COURTIER RE/MAX AU MONDE
 RANKED AMONGST THE HIGHEST PERFORMING RE/MAX BROKERS IN THE WORLD

KAZANDJIAN REALTY .com

AGENCE IMMOBILIÈRE RE/MAX 3000 | 9280 L'ACADIE, MONTRÉAL, QC, H4N 3C5